

ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ, «ԿԵՆՍՍԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ», Ա. հտր.,
Ա.-Թ, Երեւան, 1973, 382 էջ:

Կենսագրական Բառարանի հեղինակ Գառնիկ Ստեփանեան ծանօթ է որպէս գրականագէտ-բանասէր: Ան ծաւալուն վաստակ ունի այս մարզին մէջ: Իր ուսումնասիրութիւնները կ'ընդգրկեն արեւմտահայ գրական եւ թատերական միտքի հարցերը եւ: Արեւմտահայ հեղինակներու մասին անոր կատարած շահեկան ուսումնասիրութիւնները կը մասնեն լուրջ եւ խոր հետաքրքրութիւն մը՝ արեւմտահայ մշակոյթի զանազան արտայայտութիւններուն նկատմամբ: Բարեխիղճ եւ լուրջ ուսումնասիրողի վստահութիւն ներշնչած են իր գրականադիտական ուսումնասիրութիւնները: Արեւմտահայ որոշ հեղինակներ ճշմարիտ գնահատանքի արժանացած են՝ կենսագրական համապարփակ տեղեկութիւններով, Գառնիկ Ստեփանեանի խուզարկու գրիչին ներքեւ: Ուրուագիծ Արեւմտահայ թատրոնի Պատմութեան հատորները լաւագոյն գրաւականն են վերեւ կատարուած հաստատումներուն:

Կենսագրական Բառարանի հեղինակին ծրագիրն է երեք հատորով ներկայացնել, սկիզբէն մինչեւ մեր օրերը, հայ մշակոյթի գործիչներուն կենսագրական գիծերը:

Կենսագրական Բառարանի Ա. Հատորը կը բացուի Հեղինակի Կողմից երեք ու կէս էջերու մէջ շարադրուած յառաջարանով: Առաջին հերթին անդրադառնանք, յառաջարանին մէջ յայտնուած միտքերուն:

Կ'ըսուի թէ Կենսագրական Բառարանը պահանջքի մը կենսագործումն է, որուն պատրաստութեան ձեռնարկած է դրականապէս Գառնիկ Ստեփանեան երեք տասնամեակէ ասդին: Մեր մշակոյթի բնասիրական ճիւղը «Կենսագրական Բառարան»ով օժտելու մտայղացումը իրադրծելու համար, երեք տասնամեակներու վրայ տարածուող աշխատանքն ու պրպտումը կը վկային դիրքի մը մասին, որ յատուկ է հայ մշակոյթի սիրով բռնկուն եւ թեւաւորուած հոգիի մը:

Երեք հատորներու ամբողջացումէն ետք, Կենսագրական Բառարանի ներկայութիւնը որեւէ դրադարանի մէջ, պիտի գոհացնէ անկասկած ուսուցիչի, ուսանողի, մտաւորականի եւ բանասէրի հետաքրքրութիւնը՝ մեր մշակոյթի պատմութեան մէջ գործած բոլոր դէմքերու եւ գործիչներու մասին կենսագրական տեղեկութիւններ եւ ծանօթութիւններ ունենալու: Այս տեսակէտով ալ՝ կ'ըսենք թէ կարեւոր բաց մը կը գոցէ այս աշխատասիրութիւնը: Անոր լրիւ դիտակցութիւնը ունի հեղինակը, երբ կը գրէ. «Այս բացը գէթ մասամբ վերացնելու նպատակն ունի սոյն բառարանը, որի պատրաստմանը ձեռնարկել ենք երեք տասնամեակ առաջ»: Անմիջապէս աւելցնենք որ դիւրութեամբ իրագործուող եւ մէջտեղ եկող երկ չէ այս «Բառարան»ը: Բնասիրական ծանր եւ յոգնալան աշխատանք կ'ենթադրէ հատորի էջերուն մէջ ամփոփուած կենսագրութիւններուն մէկտեղումն ու իւրաքանչիւրին խմբադրութիւնը: Այդ դէմքերուն մէջ յաճախ կան այնպիսիներ, որոնք անտեսուած ու մոռցուած էին հայ մամուլի անցեալի էջերուն մէջ: Կենսագրութիւն կ'ունենան անոնք «Կենսագրական Բառարան»ին մէջ՝ շնորհիւ Գառնիկ Ստեփանեանի յոգնութիւն չճանչցող ճիւղին եւ խուզարկութեան, ինչպէս նաեւ երկար տարիներու տոկացող համբերութեան: Հեղինակին իսկ վկայութեամբ, «Անցած տարիների ընթացքում նայել ենք Երեւանի դրադարաններում առկայ հայկ. մամուլի հաւաքածոները, հարիւրաւոր թերթեր, ամսագրեր, տարեցոյցներ, Սով. Միութիւնում հրատարակուած հանրագիտարաններ, կենսագրական բառարաններ, ժողովածուներ, Սիւլուքում տպագրուած հետադասութիւններ, յուշամատենաներ, տեղեկատու դիրքեր: Օգտուել ենք Երեւանի, Մոսկուայի, Թբիլիսի մի շարք թանգարանների արխիւներէից, նամակագրական կապով նիւթեր ենք ստացել Փարիզի Նուպարեան մատենադարանից, արտասահմանում ապրող գրողներից, նկարիչներից,

դերասաններից: Այս ճանապարհով ստացել ենք հազարից աւելի մարդկանց կենսապարուծիւն, դրուած իրենց խիճ ձեռքով»:

Երբ կ'ընդգծուի Կենսագրական Բառարանին մեր մշակոյթի պատմութեան մէջ բաց մը գոցելու հանգամանքը, հարկաւ, հարց պիտի տրուի թէ նախընթացներ չունի՞ր ան: Այս ընդգրկումով եւ ծրագրով կենսադրական բառարան մը չենք ունեցած մենք, հայերս: Թէեւ, հեղինակը, իր յառաջարանին մէջ կը յիշատակէ վեց հրատարակութիւններու անուններ, եթէ ոչ որպէս նախընթացներ, սակայն դէթ յիշատակութեան արժանի ճիղեր եւ նախափորձեր: Մոռցուած է՝ Հրաչեայ Աճառեանի Անճամառուների Բառարանը: Որքան ալ կենսադրական բնոյթ չունենայ Աճառեանի կոթողային այդ գործը, միւսերու շարքին յիշուելու էր: Հեղինակը, հաւանաբար իր բացատրութիւնը ունի այդ մասին: Ձենք տարակուսիք նաեւ, որ Գ. Ստեփանեան որպէս աղբիւր եւս, այլ հրատարակութիւններու կարգին, օգտագործած է Անճամառուների Բառարանը:

Ի՞նչ չափանիշէ եւ սկզբունքէ մեկնած է հեղինակը կենսագրութեան նիւթ հայթայթող դէմքերը նկատի ունենալու համար: Դարձեալ խօսքը տանք Գառնիկ Ստեփանեանին. «Մեր բառարանում տեղ են դրել հիմնականում հայ մշակոյթի գործիչները: Անշուշտ, մշակոյթ հասկացողութիւնը շատ է ընդարձակ: Մենք աչքի առաջ ենք ունեցել զրոզներին, արուեստագէտներին, հրապարակախօսներին, գրականագէտներին, արուեստարաններին, լեզուաբաններին, թարգմանիչներին, ինչպէս նաեւ կրթական գործիչներին (եթէ նրանք մանկավարժական աշխատանքին զուղընթաց ունեցել են գրական գործունէութիւն, աշխատակցել են ժամանակի մամուլին կամ հրատարակել են դասաւրբեր, ուսումնական ձեռնարկներ)»:

Կենսագրական Բառարանը էջ առ էջ թղթատողը պիտի հաստատէ թէ այս ամբողջը, աւելի ո'վ կայ: Կայ նաեւ ուրախացնող լայնամիտ ողի մը: Կենսագրական Բառարանի էջերը բացուած են նաեւ տարբեր դաղափարախօսութիւններու ծառայած մտաւորականներու, զրոզներու, հրապարակախօսներու եւ մշակոյթի գործիչներու առաջ: Պիտի տուժէր հատորը, եթէ այս լայնախոհութիւնը բացակայէր հատորի կազմութեան ընթացքին: Բայց ան տուժած է ուրիշ բանէ մը, մեղքէ մը: Գառնիկ Ստեփանեան կարկիւնը փոքր ինչ լայն բացած է: Ընդունած է տեղ տալ հատորին մէջ, երբեմն շատ մանր դպիրներու, որոնք, այլապէս պիտի թաղուէին մոռացութեան փոշին տակ, եւ մեր մշակոյթը ոչինչ պիտի կորսնցնէր նման կարգի մոռցուածներէն: Անուններ պիտի չտանք: Կենսագրական Բառարանի ընթերցողը նման կարգի անուններու շատ պիտի հանդիպի:

«Մշակոյթ հասկացողութիւնը, որքան ալ, շատ ընդարձակ»
 Ըլլայ, կեանագրական Բառարանը զերծ պէտք էր մնար «պետական,
 քաղաքական այն դործիչներու կենսագրութիւններէն, որոնք որքան
 ալ արժանացած ըլլան միջազգային կամ համամիութենական ճա-
 նաչման» կը մատենն շեղում մը կեանագրական Բառարանի չափա-
 նիշէն եւ սկզբունքէն:

Միւս կողմէ՝ մտածուած մշակութային խելացի քաղաքակա-
 նութիւն է կեանագրական Բառարանէն ներս ընդգրկել «այն դոր-
 ծիչներին, որոնք ծագումով հայ են, բայց հայ ժողովուրդի ճակա-
 սապրի բերումով համընդհանուր ճանաչման են արժանացել օտար
 ժողովուրդներ կրականութեան եւ արուեստի մէջ»: Յամենայնդէպս,
 մենք հաճոյքով կարդացինք կենսագրութիւնները, Շարլ Ազնաւուրի,
 Արդիւր Ատամովի, Մայքլ Աւլեմի, Համրի Թրուայիայի եւ այլոց:

«Մի բառարան, որը պարունակում է հարիւր հազարաւոր
 փաստեր՝ անուններ, թուեր, եղելութիւններ, հազիւ թէ կարող է
 զերծ լինել վրիպումներից ու բացթողումներից» կ'ըզակացնէ Գառ-
 նիկ Ստեփանեան իր յառաջարանին մէջ: Իր այս խօսքերով կը զգաց-
 նէ թէ «անթերի ու կատարել» դործ մը կատարած ըլլալու յա-
 ւակնութիւնը չունի ան: Թէ՛ ինչ բացթողումներ կան Ա. հատորին
 մէջ, դժուար է մատնանշել: Եւ արդէն հեղինակը կը խոստանայ Գ.
 հատորի յաւելուածին մէջ տեղ տալ «թիւրիմացաբար դուրս մնա-
 ցած անուններուն»: Մենք, մեր ընթերցումներու ընթացքին հան-
 դիպեցանք նաեւ վրիպումներու. արձակագիրը եղած է բանաստեղծ,
 բանաստեղծը արձակագիր, եւն.:

Բայց ո՞վ կ'ըսէ թէ արդար պիտի ըլլար, այս տեսակի գոր-
 ծէ մը, կատարելութիւն սպասել: Իր բացթողումներով ու վրիպում-
 ներով հանդերձ, Գառնիկ Ստեփանեանի կեանագրական Բառարանը
 կը համարենք նոր յաւելում մը, ողջունելի իրագործում մը հայկ.
 բանասիրութեան մարդին մէջ, յատկապէս նկատի ունենալով այն ի-
 բողութիւնը որ առաջին անգամ ըլլալով այս ընդգրկումով, այս
 ծրագրով եւ այս տարողութեամբ կենսագրական բառարան մը կը
 հրատարակուի հայ բանասիրական պատմութեան մէջ: